

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԵՆՔԵՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երեսուներկու տարի առաջ, երբ հիմնադրվում էր Երևանի պետական համալսարանը՝ Սովետական Հայաստանի առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը, ամենայն սրությամբ հարց ծագեց՝ որտե՞ղ տեղավորել նոր ստեղծված հաստատությունը։ Դյուրին չէր լուծել այդ խնդիրը, քանի որ այն ժամանակվա Երևանը հնուց ժառանգել էր, շատ քիչ բացառությամբ, միայն կավաշեն տներ։ Եղած սակավաթիվ քարաշեն, քիչ թե շատ հարմար շենքերն անկարող էին բավարարել քաղաքի նոր, մի անգամից աճած պահանջներին։

Հարկ եղավ համալսարանը տեղավորել դպրոցներից մեկում՝ երկհարկանի մի շենքում, Արովյան փողոցի վրա։

Այն ժամանակից ի վեր շատ բան է փոխվել այդ շենքում։ Ավելի շուտ այն դարձել է միանդամայն անճանաչելի։ Համալսարանի զարգացման հետ միասին վերակառուցվել, մի քանի անգամ ընդարձակվել է այն, դառնալով քաղաքի խոշոր շենքերից մեկը։ Նրա բազմաթիվ լսարանները, աշխատասենյակները, փորձասրահները, մեծ ու փոքր սենյակները և ուսումնական այլ հարմարությունները հնարավորություն են տալիս ուսուցանելու ավելի քան երկու հազար ուսանողների վեց ֆակուլտետներում։

Սակայն այնուամենայնիվ այս շենքը անկարող է լիովին բավարարել համալսարանի բոլոր կարիքները, մանավանդ եթե նկատի ունենանք նրա հետագա զարգացման հեռանկարները։ Այդ իսկ պատճառից հարց դրվեց կառուցելու նոր շենք։

Սովետական կառավարությունը, որն իր խաղաղ ստեղծագործական աշխատանքում բացառիկ ուշադրություն է ցուցաբերում կուլտուրական շինարարության գործին, սիրով ընդառաջ գնաց այդ պահանջին և դրական լուծում տվեց համալսարանի շենքի կառուցման խնդրին։

Շենքի նախագծման աշխատանքների համար հրավիրվեցին լավագույն մասնագետներ՝ ճարտարապետ Ե. Տիգրանյանի գլխավորությամբ, որին և պատկանում է հեղինակության պատիվը։

Ի՞նչ է իրենից ներկայացնելու համալսարանի նոր շենքը։ Մեր առաջ է նրա գծագրական նկարը։ Փորձենք համառոտակի նկարագրել այն։

Նոր համալսարանն իրենից ներկայացնելու է 5—6 հարկանի շենքերի մի ամբողջական կոմպլեքս (խումբ)։ Այդ շենքերից յոթը հատկացվելու են ուսումնական կարիքների համար, որոնցում տեղավորվելու են ֆակուլտետները։ Նրանք կունենան այն բոլոր հարմարությունները, որոնք անհրաժեշտ են ուսման համար։ Բավական է ասել, որ ֆակուլտետները կունենան 45 տարբեր, հատուկ կառուցված և նորագույն գործիքներով կահավորված փորձասրահներ (լաբորատորիաներ)։ Ուսանողներն իրենց արամադրության տակ կունենան 675 լսարան և առան-



Երևանի Պետական համալսարանի կառուցման ընթացքի մէջ գտնվող շենքի գլխավոր ճակատը՝ ըստ նախագծի։

ձին աշխատասենյակ։ Յուրաքանչյուր ֆակուլտետ կունենա իր ընդհանուր դահլիճը հավաքույթների և հանդեսների համար։ Բացի այդ, ընդհանուր համալսարանի համար կլինեն երկու առանձին մեծ դահլիճներ, որոնցից մեկը մոտ 2.000 մարդու համար։

Ուսումնական շենքերից բացի, համալսարանը կունենա բազմաթիվ այլ շենքեր կենցաղային և մյուս կարիքների համար։ Կառուցվելու են երկու խոշոր հիմգ հարկանի տներ ուսանողական հանրակացարանների համար՝ իրենց բոլոր հարմարություններով։ Այդ տներում տեղավորվելու են երկու հազար ուսանողներ։ Յուրաքանչյուր սենյակում բնակվելու են 2—3 հոգի։

Ուսանողական հանրակացարաններից բացի, կառուցվելու է առանձին բնակելի տուն համալսարանի պրոֆեսորների և դասախոսների համար։ Այդ տան յուրաքանչյուր բնակարանը բաղկացած է լինելու 3—4 սենյակից՝ իր բոլոր հարմարություններով։

Համալսարանը կունենա իր առանձին ճաշարանները, բաղնիքները, լվացքատունը, ջեռուցման կաթսայատունը, էլեկտրական ենթակայանը, մարմնամարզական դահլիճները և բացօդյա հրապարակները, զբոսայգին, կինո-թատրոնը, ակումբը։

Շենքի նախագծի հեղինակն իր գծագրություններում վարպետորեն և լայն կերպով օգտագործել է հայկական հին ճարտարապետության լավագույն նմուշները, որոնք կառուցումներին կտան վեհաշուք և հոյակերտ տեսք։ Բոլոր գլխավոր շենքերը երեսպատվելու են սրբատաշ բազալտով և Հայաստանի բազմերանգ, գեղեցիկ տուֆերով, որոնց մեջ գերիշխողը կլինի Լոռվա բաց մարմնագույն, հիանալի շինաքարը, որը շինարարներին հայտնի է ֆիլզիտ անունով։ Շենքերի ճակատները զարդարված կլինեն հայկական հարուստ զարդաքանդակներով, խոյակներով, սյուներով ու կամարներով։

Հարկ է նշել, որ համալսարանի նոր շենքի հետ միասին, ներսի ողջ կահավորանքը ևս լինելու է նոր։ Հին շենքից այստեղ ոչինչ չի փոխադրվելու։ Ամեն ինչ՝ սկսած փորձասրահների գործիքներից, ուսումնական այլ պիտույքներից և վերջացրած լսարանների ու հանրակացարանների կահկարասիներով՝ լինելու է նոր, որոնց պատվիրման համար այժմյանից ձեռք են առնվում միջոցներ։

Համալսարանի շինարարության համար քաղաքի արևելյան մասում, Այգեստան կոչված թաղամասում, հատկացված է շուրջ 9 հեկտար տարածություն։ Այս թաղամասը Երևանի նորակառույց թաղամասերից մեկն է, ուր իրար հետևից բարձրանում են նոր կառուցվող բնակելի տներ, հասարակական շենքեր։

Շինարարական աշխատանքներն սկսվել են ընթացիկ տարվա գարնանից և հաջողությամբ առաջ են տարվում։ Ավելի արագ է ընթանում բիոլոգիական ֆակուլտետի շենքի կառուցումը։ Սկսված է մյուս գլխավոր շենքերի հիմնադրումը։

Շինարարության վայրն իրենից ներկայացնում է մի հուզիչ տեսարան։ Օրնիբուն այստեղ չի դադարում աշխատանքային եռուզեռը։ Անդադար լսվում են մեքենաների աղմուկը, քարտաշների մուրճերի զարկը, բանվորների ուրախ բացագանչությունները։ Շուրջն ամենուրեք նկատելի են շինարարական նյութերի՝ փայտի, քարի, ավազի, ցեմենտի, կրի հսկայական կույտեր։

Կառավարական մարմինները մեծ ուշադրություն են նվիրում համալսարանի կառուցմանը։ Նրանք ձեռք են առել բոլոր միջոցները, որպեսզի շինարարությունն ապահովված լինի բանվորներով, շինարարական մեքենաներով և նյութերով, փոխադրական և դրամական միջոցներով։

Կառուցողների եռանդուն ջանքերի շնորհիվ անցած ամիսների շինարարական առաջադրանքները կատարվել էին։ Ընթացիկ տարվա համար հատկացված միջոցները յուրացված են։

Պետական համալսարանի շենքի կառուցման համար նախատեսված է ծախսել 54.000.000 ռուբլի։

***

Քաղաքի ուսանողական թաղամասում, այստեղ, ուր կենտրոնացված է Երևանի բարձրագույն ուսումնական հաստատությունների մեծ մասը, կառուցվում է Պոլիտեխնիկական ինստիտուտի նոր շենքը։

Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը Սովետական Հայաստանի խոշորագույն բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկն է։ Իր գոյության 25 տարվա ընթացքում նա տվել է բազմաթիվ որակյալ մասնագետներ։ Ռեսպուբլիկայի արդյունաբերական ձեռնարկություններում, նորակառույցներում, հիդրոէլեկտրակայաններում աշխատող շատ ինժեներներ իրենց կրթությունն ստացել են այս ինստիտուտում։ Նրա համբավը, որպես առաջավոր մասնագիտական բարձրագույն ուսումնական հաստատություն, հռչակված է Հայաստանի սահմաններից հեռու։ Ամեն տարի այստեղ ստվորելու են գալիս մեծ թվով երիտասարդներ հարևան ռեսպուբլիկաներից։

Ռեսպուբլիկայի տնտեսական և շինարարական ընդհանուր վերելքի հետ միասին աճում և զարգանում է նաև այս ինստիտուտը, մասնագիտական կադրերի այս հիանալի դարբնոցը։ Քիմիական, հիդրոտեխնիկական, շինարարական և էլեկտրոտեխնիկական ֆակուլտետներից բացի երեք տարի առաջ այստեղ բացվեց երկրաբանական ֆակուլտետ, ուր պատրաստվում են Սովետական Հայաստանի ընդերքն ուսումնասիրող մասնագետներ։

Ինստիտուտի ներկա ուսումնական հարմարությունները չեն բավարարում նրա առաջ դրված խնդիրները հաջողությամբ կատարելու։ Այս նկատառումով է, որ ընթացիկ տարվա սկզբից ձեռնարկված է ինստիտուտի նոր ուսումնական շենքի կառուցումը։

Հինգ հարկանի այս շենքն իր ծավալով երկու և կես անգամ ավելի մեծ է լինելու ներկայի շենքից։ Այն կունենա բոլոր հարմարությունները։ Լուսավոր ընդարձակ փորձասրահները կահավորված կլինեն նորագույն գործիքներով և սարքավորանքով։

Շինարարական աշխատանքներն ընթանում են արագ թափով։ Ենթադրվում է մինչև գարուն ավարտել շենքի կենտրոնական հատվածի կառուցման քարային աշխատանքները։ Նոր շենքի կառուցումով Պոլիտեխնիկական ինստիտուտը հնարավորություն կունենա է՛լ ավելի բարելավել ուսումնական աշխատանքները և հաջողությամբ կատարել իր առաջ դրված խնդիրները։